

Տարեկան գինը 10 ռուբլ կէս տարվան 6 ռուբլ:

Թիֆլիսում գրվում են միմյան խմբագրատան մէջ:

Պատրաստվածքներ գրվում են ուղղակի
Тифлисе. Редакция „Миръ“

ՄԵՆԿ

Խմբագրատունը բաց է առևտրական 10—2 ժամ
(Բացի կիրակի և տոն օրերից)

Հայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով:

Հայտարարութիւնների համար վճարում են
իւրաքանչիւր բառին 2 կոպէկ:

Գեներալ-ադիւտանտ, գեներալ-լէյտենանտ Յովհաննէս Դաւթեան ԱՊՁԱՐԵՎԻ զաւակները յայտնում են, որ իրանց հանգուցեալ հօր մարմինը կը բերվի Սողան լուսի կայարանից Թիֆլիս շաբաթ օր, 25-ին օգոստոսի, 4 ժամին կէս օրից յետոյ, որտեղից կը տարվի Սառուածածնի եկեղեցին, Կուկիայում, Բէյալական դպրոցի հանդէպուր և խնդրում են հանգուցեալի բարեկամներին և ծանօթներին շնորհ բերել երկուշաբթի օրը, օգոստոսի 27-ին, առաւօտեան ժամը 9 1/2 յուղարկաւորութեան հանդիսին զէպի վանքի մայր եկեղեցին:

2—2

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Բաղաբական վերջին անգիրը—ն էր քին տեսութիւն: Նամակ Ալեքսանդրապոլցի: Նամակ Խմբագրին: Ներքին լուրեր: Արտաքին տեսութիւն: Ֆրանսիա: Անգլիա: Նամակ Թիւրքիայից: Նամակ լուրեր: «Մշակի» հեռագիրներ: Բայտարարութիւններ: Տեղեկացոյց: Բանասիրական և այլ ազգայն:

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ՎԵՐՋԻՆ

Լուի Բանասիրտի մահը վերականգնեց ֆրանսիական բոլոր

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՈՍԿԻ ԱՔԱՂԱՂ

(Առաջին մասը)

ԹԳ:

Անցաւ երեք տարի եւս: Միջաշէլը այժմ մեծացել, բաւական շնորհալի տղայ էր դարձել, բայց նրա վիճակի մէջ մի առանձին փոփոխութիւն էր եղել: Մտաւորապէս հինգ տարի կը լինէր, որ նա ծառայում էր Մասիսեանի թէ տանը և թէ խնամութեամբ, և ամեն նաւաւ զործակատարներից մէկը կարելի էր համարել նրան, բայց տակաւին ոչինչ վարձատրութիւն չէր գտել, թէ նրա հօրեղբորը, Աւետ ապօրը, խնամեցել էին, թէ խնամութի աշակերտ դաստիարակեց յետոյ ուսման կը նշանակէին: Միջաշէլին դեռ անընդունակ էին համարում շատ բաների մէջ: Նա երբեք չէր կարողանում սովորել, թէ որպէս պէտք էր հասկանալ զգաւը և որպէս պէտք էր հասկանալ զգաւը: Վաճառականները առանձին նշանակաւորութիւններ ունեն, որպէս աւազակները ունեն արդ օթ և ան լեզու:

Վաճառականի ճարպիկութիւնների զաղտնիքը ըմբռնելու համար, վաճառականի արդ օթը սովորելու համար, պէտք է տեսնել, որ Միջաշէլը իրաւ որ անընդունակ էր: Նա դեռ չէր գիտէր, թէ որպէս պէտք է արշինը պարտացնել, որ, օրինակ, 10 արշին երկայնութիւն ունեցող կտաւը կարելի լինէր 11-ի հաւասար դուրս բերել: Նա դեռ չէր գիտէր, թէ կշիռների և չափերի մէջ ինչ տեսակ խարդախութիւններ պէտք էր բանալ: Նա այս էր պատճառը, որ նրան անդադար լսել էր տալիս աղայի յանդիմանութիւնները: Գլխաւոր, դու մարդ չես դառնալ:... Այդ բոլորը նա ոչ թէ չէր գիտէր, ոչ թէ չէր կարող կատարել աւելի լաւ և աւելի ճարպիկ կերպով, քան թէ միւս գործակատարները, բայց ատում էր, զզւում էր, անբարո-

գոյների միապետական կուսակցութիւնների յոյսերը: Օրինականները մինչև անգամ յոյս ունեցան վերականգնել «Նստուածային իրաւունքի» պետութիւնը և կոմս Համբօրին բարձրացնել Ֆրանսիայի գահի վրա:

Լրագիրները հաղորդում են, որ օրինական կուսակցութիւնը նորերում մի ժողով ունեցաւ որին ներկայ էին կոմս Համբօրի հաւատարմատարները: Այդ ժողովը խորհրդածութիւնները այն հետեւանքի են հասել, որ առժամանակ օրինական կուսակցութիւնը չէ կարող յաղթող հանդիսանալ և որ աւելի լաւ է սպասել յաջող հանգամանքներին: Ժողովին ներկայ գտնվող օրինական կուսակցութեան մի բանի անդամներ առաջարկել են յեղափոխութիւն գործել և գիւղական բնակիչներին ոտքի կանգնեցնել, ի նկատի ունենալով, որ գիւղական հասարակութիւնը այ-

ժամ չափազանց անբաւական է կառավարութեանց Ֆերիի օրէնքի նախագծի պատճառով, բայց կոմս Համբօրի հաւատարմատարները չեն համաձայնեց:

Կոմս Համբօր ինքը լաւ հասկանում է, որ եթէ այդպիսի փորձ անգամ անուէր, նա անաշող վախճան կունենար: Մինչև անգամ միւս միապետական կուսակցութիւնները հակառակ կը լինէին, որ կոմս Համբօր բարձրանար Ֆրանսիայի գահը:

Լրագիրները հաւատացնում են, որ իրան կոմսին այդ հանգամանքը շատ լաւ յայտնի է և ինքը չէ ցանկանում Ֆրանսիային տիրել, այդ է պատճառը, որ նա այդպիսի յամառութեամբ պաշտպանում է սպիտակ դրօշակը:

Մատրիական առաջին միւստոր կոմս Անդրաշի հրաժարականի լուրը հաստատուեցաւ: Մատրիական կառավարութեան պաշտօնա-

կան լրագիրներից մէկը տպել է կոմս Անդրաշի խօսակցութիւնը իր աշխատակիցներից մէկի հետ, որի ժամանակ կոմս Անդրաշի մեկնել է իր հրաժարականի պատճառները:

Կոմս Անդրաշի հաւատացրել է այդ լրագրի աշխատակցին, որ նա հրաժարվում է իր հիւանդութեան պատճառով և Ֆրանց-Յովսէփ կայսրի կամքի հակառակ:

Այդպիսի բացատրութիւնը ինքը միմիտը անբաւականացուցիչ է գտել և ակնարկել է Աւստրո-Ռուսարիայի արեւելեան քաղաքականութեան վրա:

Կոմս Անդրաշի հաւատացնում է, որ իր պաշտօնից հեռանալուց յետոյ էլ նա կառավարողի աւստրիական կառավարութեանը:

Վ. Տ.

և մինը միւսին համապատասխանող օրէնքներով էր գնում: Նա, որպէս չէր փոխում իր հին տան շինութեանը ձևը, որպէս չէր փոխում իր ընտանիքի կազմակերպութեան ձևը, որպէս չէր փոխում իր խնամութեամբ ընդունված առևտրական եղանակի ձևը, այնպէս էլ չէր փոխում իր հագուստի ձևը: Դա անշարժութեան կատարեալ յատկանիշն է: Մի մարդ, մի ժողովուրդ և վերջապէս մի ամբողջ ազգ, երբ շուտ-շուտ է փոխում իր հագուստի ձևերը, այնպէս էլ շուտ փոխում է իր հասարակական կենսի ձևերը:

Միջաշէլը նոր հագուստ ունենալը թէ նա մի գաղտնիք էր, բայց տան մէջ շատերը գիտէին. գիտէր Թիֆլիսը, գիտէին և նրա երկու աղջիկները՝ Գալիանէն և Զոփիսիմէն:

Այդ երկու անմեղ արարածները այժմ բաւական փոխվել էին: Գալիանէն էլ չէր հագում, առողջ էր, միայն տարիների հետ ողբան նրա արտաքին կերպարանքը այլանդակվում էր, այնքան նրա բնականութիւնը, հոգեկան յատկութիւնները գեղեցիկ կերպարանք էին ստանում: Զոփիսիմէն, ընդհակառակը, ձևակերպվել, սիրունացել և մի նազելի օրիորդի դէմք էր ստացել, բայց նա մնացել էր դարձեալ ծաղրող, դարձաւ արհամարհող և մի նոյն հպարտը, որպէս էր միշտ: Հպարտութիւնը յատուկ է սիրուն աղջիկներին: Բոլոր տանիցները սիրում էին Միջաշէլին բացի Զոփիսիմէնից: Նա դեռ պահպանել էր իր ստույն յարաբերութիւնները զէպի գիւղացի առաջին քոթօթը, որի առաջին տարիների կենսից պատմում էր շատ և շատ ծաղրական էպիզոդներ, երբ նա անկիրթ, անխորձ և անտալ յայտնվեցաւ նրանց տանը: Բայց Զոփիսիմէն այրում և մինչև անգամ միջադուրս էր, երբ Միջաշէլը նրա կատակներին պատասխանում էր իր արհամարհական ռուքներով:

Եւ ճան աղջկայ սէրը զէպի տան սպասաւորը շատ անգամ սկսում է կատակներից: Ծաղրել, ասել և պախարակել, դրանք մի տեսակ ցուցեր են, երբ գիտար էր համարձակ ասել. «ես սիրում եմ քեզ» կամ «դու ինձ դուր ես գալիս»: Բայց Միջաշէլը այնքան հասած էր, որ չէր կարող չը նկատել Զոփիսիմէնի փոքրիկ խորամանկութիւնները, և երբ ստանութեամբ էր վերաբերվում զէպի նրա կատակները, միշտ լսում էր այսպիսի խօսքեր. «Ենչ-

յառ թանգ էր նստում: Չը նայելով իր վրա բարդված անտանիքի աշխատութիւններին, այն օրից, որ նա մտել էր Մասիսեանի տունը, և օրից ան յետ էր հինգ տարի, այնքան տարվայ ընթացքում նա ոչ միայն կոպէի փող չէր ստացել աղայից, այլ նրա համար մի նոր հագուստ ևս չէին կարել տուել: Նա դեռ ևս հագնում էր տան նստիչները, որ Թիֆլիսի Մարիամ կարկնում և յարմարացնում էր նրա համար: Բայց նա խնամութեամբ ստացած «չաղիւրդանանիք» * հինգ տարվայ ընթացքում յետ էր գցել մի փոքրիկ գուժար, որ հանում էր քան ընդուն, և այդ փոքրիկ կարել էր տուել իր համար մի ձեռք հագուստ, որ դեռ միանգամ ևս չէր հագել, և այն հագուստով չէր երևացել աղայի աչքին, այլ ծածուկ պահում էր, որ զատկին իրանց գիւղը գնալու ժամանակ հագնէ:

Մասիսեանը առհասարակ սիրում էր իր գործակատարներին վատ հազնված տեսնել: Նրա կարծիքով հագուստը մերկութիւնը ծածկելու համար էր և ոչ թէ վաղելութեան համար: Եւ մաշված հագուստով գործակատարը միշտ վաղելում էր նրա առանձին հաւատարմութիւնը. «Բոլորի դաղը իմացող է», նկատում էր նա: Բայց իր անհաշիւ անհասկանալի տեսակետից կշռելով ամեն ուրիշ մարդու վարմունքը, նա խիստ անվայել էր համարում տեսնել մէկին, որ հետեւում է նորաձեւութիւններին, որ իր վրան—գրուրը դարձրել է, քանի որ ինքը, աղան, այնքան մեծ հարստութեան տէրը, երբեք չէր փոխում իր հագուստի ձևերը, որպէս չէր փոխում իր մարմնի կաշին: Մասիսեանի ճաշակին այն աստիճան սովորել էին գործակատարները, որ ամեն կերպով աշխատում էին յարմարել Նրանը, ուրիշ քաղաքներում գեղեցիկ հագնվում էին, շուրջ ապրում էին, ոսկի ժամացոյց էին կրում ոսկի շղթայով, կառքերով էին զբոսնում,—բայց երբ պատահում էր վերադառնալ աղայի մօտ հայրիկ կամ մի ուրիշ գործի համար, բոլորովին կերպարանափոխվում էին, և յայտնվում էին մաշուած հագուստով, ողորմութիւններահալան դէմքով և հին քոչերով: Մասիսեանը այն բնականութիւն ունէր, ինչ ուղղում ևս, արա, միայն նրա աչքը չը տեսնէ: Ամեն բան նրա մէջ յաղորդաբար,

Մասիսեանի խնամութի ծառայողների մէջ Միջաշէլը միայն էր, որ պանդուխտ էր, միւսները քաղաքում ևս կամ ծնողներ կամ աղջկաններ ունէին և գիւղերը իրանց տներն էին գնում: Նրանք միայն խնամութի հետ գործ ունէին և ազատ էին աղայի տնային ծառայութիւններից: Այդ հոգը մնացել էր Միջաշէլի վրա միայն, թէ նա այժմ բաւական բարձր էր մի հասարակ սպասաւոր լինելուց, և այն ստոր ծառայութիւնները, որ նրան անել էին տալիս, մինչև անգամ վերաւորական էր նրա համար: Տիֆլիսի Մարիամը շատ անգամ ասել էր իր ամուսնին, որ մի նոր սպասաւոր վարձ է Միջաշէլը ազատ մնալ տնային ծառայութիւններից: Բայց միշտ նրա ինչիւրեք մնացել էր անկատար, ստանալով աղայից մերժողական պատասխան. «ես մեկօրեայ հաց չունեմ, որ նրան ուտացնեմ, հողին չի դուրս գալ, թող տան բանն էլ անէ, դուքանի բանն էլ»:

Բայց այդ «մեկօրեայ» հացը Միջաշէլը վրա

* «Շաղիւրդանանիք» նշանակում է այն փոքրիկ բնական, որ լինում է մի քանի կոպէկներից, որ ստանում են խնամութեանն աշակերտները:

Հարցը, զա պէտք է որ փոքր ինչ էլ օտար երկրներին հետաքրքրէ. զա մի հոգաւոր հարց է, որ յանձնված է ամբողջ երկրի խորհրդին, և այս երկրորդ անգամն է որ զա ներկայանում է Ֆրանսիայի ընդհանուր ժողովրդի դատաստանի առաջ:

Նահանգական ընդհանուր խորհրդարաններն անխնայ կերպով աշխատելով մի արդարաբար փշիռ տալ այս գործին հանգուցաւոր հարցին, մի և նոյն ժամանակ նրանք անտես չեն անում և իրանց միւս աշխատութիւնները: Ժողովուրդը թէ լրագրութիւնը մի առանձին գարմանքով են նայում քաղաքականութեան այս անբոլորութեան վրա. մի ուրիշ անգամ այսպիսի նշանաւոր հարցերի քննութիւնները լեւներ կը դրոշմեցնէին, իսկ այժմ հազիւ թէ դա շարժում է հասարակական կարծիքը. այս ձև վարմունքը այն էլ քաղաքական խնդիրների մէջ, զա բոլորովին Ֆրանսիականն է:

Ինչպէս ասացինք նահանգային ընդհանուր խորհրդարանները միայն Ֆերրիի կանոնադրութեան ծրագրով չեն դրադաժ, նրանց բացի այդ գրադիցնում է և մի ուրիշ հարց, որը ոչ պակաս նշանաւոր և հետաքրքիր է ամբողջ երկրի համար. զա դատաստանական վերանորոգութեան հարցն է. այս հարցը երկար ժամանակ զբաղեցնում էր պետական գործողների ուշադրութիւնը, բայց այժմ երբ նրանք այնքան չարաքովիւց յետոյ չը կարողացան հասնել իրանց նպատակին, նրանք այժմ այդ հարցը ենթարկեցին հասարակական կարծիքին. տեսնելով թէ հասարակական կարծիքը ինչ եղանակացութիւն կը տայ այս կնիւնտ հարցին:

Փարիզի «Grand Hôtel» հիմնարկութիւնը գնահատելով 19 միլիոնի և ծախելով 21 միլիոն երեք հարիւր վաթսուհին հազար ֆրանս կով:

Վաղընդուն այս օրերս կընդունի Ռուս միւնիսթի արտաքին գործերի մինիսթր պ. Բոէրէսկիւն, որը եկել է խորհրդակցելու նրա հետ խորայնական հարցի մասին:

Այլեւի նահանգի պատգամաւոր պ. Վորնիլ, որ այժմ խորհրդի նախագահ ընտրվել, նահանգական ընդհանուր խորհրդարաններին նիստերի սկսվելուց առաջ մի նշանաւոր ճառ Խոսեց, չը նայելով այդ ճառի բոլոր գեղեցկութեանը, մեզ անհար է մէջ բերել նրա ամբողջութիւնը, միայն մենք կաշխատենք դնել մի քանի տեղերից համառօտաբար քաղաւածք անել:

«Աւելի վեց ամիսէ, ասաց նա, որ հասարակական կարծիքը գլխաւորապէս յուզված է բարձրագոյն ուսման վերաբերեալ ընդհանուր հարցերով: Նորերս ժողովրդական լուսաւորութեան միւնիսթը յայտնեց թէ շուտով մի օրէնք կը հրատարակվի, որը կարգի կը դնէ ուսման բարձրագոյն ուսման աղաւաղված հարցը: Սա մի ուրախելի լուր է. իսկ Ալլիէի համար սա աւելի քան թէ ուրախելի է. Ալլիէի համար այս լուրը անհրաժեշտ պահանջ է—Ալլիէի համար, ուր 7-8 հազար երեխաներ գրկված են ամենատարրական ուսումից անգամ:

«Դուք այս բաները նոյնչափ հասկանում էք, որչափ և ես, որովհետեւ ասածիս կատարեալ ապացոյց է այն, որ դուք դեռ անցեալ ապրիլին մի առանձին ուղերձով պաշտպանեցիք Ժիւլ—Ֆերրիի առաջարկած օրէնքի ծրագիրները, մանաւանդ, ես լաւ յիշում եմ, որ դուք մի առանձին ուշադրութեամբ էիք պաշտպանում առաջարկված ծրագրի այն յօդուածը, որ ձգտում էր զգրկել զանազան ուստի միաբանութիւններին ուսում տալու իրաւունքից և որ ձգտում էր առհասարակ հեռացնել այդպիսիների ուսումնարանական հիմնարկութիւններից և երկասարկութեան առաջնորդելու ասպարէզից: Պարոններ, ես այժմ ձեզ եմ թողնում տալ և չը տալ ձեր հաւանութիւնը այս օգտակար օրէնքին, որը ձգտում է վերջ տալու այն թունաւոր հա-

կառակութիւններին, որոնք զոյւթիւն ունեն, և որոնք պատրաստվում են ապագայում աւելի ևս թունաւոր կերպով շարունակել Ֆրանսիական ծաղիկ երկուսարդութեան երկու հակառակ կուսակցութիւնների մէջ: Վերջացնելով իմ խօսքերս, ես ձեզնից վստահանում եմ խնդրելու, և այդ միշտ յօգուտ այն հասարակութեան, որ բաղաւորացրել է ինձ իրան ներկայացուցիչ ընտրել, որ դուք մանաւանդ առանձին ուշադրութեամբ պաշտպանէք Ֆերրիի օրէնքի 7-րորդ յօդուածը, որը, յուսով եմ, վերջ կը դնի շուտով այն մեծ դատին, որ Ֆրանսիական հանրապետութիւնը բացել է իր հարազատ որդոց հասարակական կարծիքի արդարադատութեան առաջ:

ԱՆԳԼԻԱ

Կապից դէպի Պլիմսա լողացող Dublin-Castie անունով նաւի վրա ճանապարհորդողների թւում հասաւ Անգլիա և լօրդ Վիլլիամ Բէրէս-Ֆորդը, որ գուլուաների դէմ մղված մեծ ճակատամարտից յետոյ առաջինը եղաւ, որ թափանցեց Ուլիսիդի: Պատերազմի վերաբերութեամբ նրան ուղղված հարցուփորձին, լօրդը պատասխանեց, որ նրա կարծիքով պատերազմը վերջացած պէտք է համարած. և եթէ տեղի էլ ունենան մի քանի թեթիւ կռիւներ, դրանք միայն փոքրիկ կուսակցական կռիւներ կը լինեն: Զուլուաների առաջնորդների մեծ մասը արդէն յայտնել են իրանց հպատակութիւնը. իսկ ինչ կը վերաբերի Յէտիվայօին, առաջինը նրա անհնազանդութիւնը վտանգաւոր չէ կարող համարվել, և երկրորդ նա չէ էլ կարող երկար այդպէս ազատ շրջել, որովհետեւ անգլիական կառավարութիւնը բաւական չլացուցիչ զուժար է նշանակել այն անձին, որ նրան ողջ կամ սպանված կը ձերբակալէ...

Տեսնում էք, ընթերցող, թէ լուսաւորված Բրիտանիայի հանձարեղ (!) քաղաքականութիւնն ինչ տեղ է հասնում, որ նա ահա գին գումարներ է վճարում վայրենի զազանի նման հայածել այն մարդուն, որ մարդկութեան ամենատուրը պարտականութիւնն է կատարում և որի բոլոր յանցանքը կայանում է նրանում, որ նա պաշտպանում է իր հայրենիքը...

Մենք շատ կը ցանկանայինք իմանալ թէ այս դէպքում ո՞ւմ վարմունքը աւելի սուրբ ու արդարադատ է...

Ամաչում ենք մտածել որ այժմ էլ դեռ ոյժը արդարադատութիւն է համարվում...

Սիր Դարնէտ—Վօլքէյ մի քանի գործաւորներ է ուղարկել Յէտիվայօի դէմ վճռական հարուած տալու, և այդպէսով խաղաղացնելու վերջով ձեռքերը:

Լօրդ Բէրէս-Ֆորդը աւելացրեց, որ եթէ նա համոզված չը լինէր, որ պատերազմը վերջացած է, նա երբէք չէր թողնի պատերազմի բեմը:

Յամար իջնելու ժամանակ Վալիսի իշխանը և Էդմոնդսի դուքսը Osborne անունով թաղաւորանաւով դիմաւորեցին նրան: Թաղուհու մի առանձին հրամանով լօրդ Բէրէս-Ֆորդը մի պատերազմական նաւով պէտք է ուղևորվել Կովէս:

Կապ—Տէօնի կանայք անթաւաճ ծաղիկներին հիւսած մի անմահ պտակ և մի վշտակցական աղբէս են ներկայացրել նախկին կայսրուհի Էօփէնիին. լօրդը նրանց անձամբ կը ներկայացնէ սգաւոր կայսրուհուն:

Լիւրդան քաղաքում մի հետաքրքիր խոսքովութիւն է ծագել: Այդ քաղաքից գրում են «Daily Chronicle» լրագրին, որ այնտեղի ջերմեռանդ կաթօլիկ արեղաները, յայտնի չէ ինչից զրդված, յարձակվել են Լիւրդան անունով մի բողոքականի տան վրա, քարերով կոտորել են նրա տան բոլոր դռներն ու պատուհաններն, այնպէս, որ պօլիցիան միջամտելով հազիւ յաջողացրել է վերջ դնել կատաղի քահանաների բարեկաշտական ցամաքը:

ՆԱՄՈՒԿ ԹԻԻՐԻՔԻԱՅԻՑ

Կ. Պօլիս 11 օգոստոսի

«Հայոց զուլմը բռնկեք է» այսպէս կը խօսեն Կ. Պօլսոյ օտարականներն և թիւրքերն. օր նոր կուռի լուր նոր: Հայաստանի գաւառներն, հայ ժողովուրդը կամ անգղական իշխանութեան հետ կամ իւր առաջնորդին հետ անպատճառ վէճ մը ունեն. արիւնասեղութիւնը օրակարգ է: Կ. Պօլիս ալ քիչ չափ հայ ժողովուրդը անհանգստ է. և ոտովկանութեան նախարարն կը յայտարարէ իւր բարեկամաց թէ մինչև որ մի քանի հարկու հայեր չը կտրէ և չը կտրէ այս ժողովուրդը հանդարտեմք չունի, և կը համարձակի նաւամատոյցի մը վրայ իսկ այս յանգուզն խոտովանութիւնը անել, երբ կը ձեւեակալէր արաբներն կրող հայերն:

Բայց երբ յուզմունքն ազգային խնդրոց նկատմամբ է, շատ անգամ ցաւալի կերպարանք մը կառուցու և ժողովուրդը շատ անգամ կը մոռնայ իմաստուն կերպով դրոժելու եղանակն: Կ. Պօլսոյ բազմաթիւ ժողովուրդը, իսկականորէն իրենց քարոզիչ վարդապետի պատճառաւ երկու մասի կը բաժնուին. Պատրիարքարանի հրահանգաց չեն անսար. եկեղեցւոյ մէջ անվայել ընթացք կունենան, թաղական խորհուրդը կը զանալովեն, միւսն է որ թիւրք ոտովկանութիւն կը միջամտէ և կը հանդարտեցնէ: Մի քանի օր վերջը մէջիլ, սերաստացի, Կ. Պօլսեցի ժողովրդի բազմութիւնն մը քաղաքական և կրօնական ժողովոյ ժողովատեղին կը բռնաբարէ. իզմիրլիան հեռանալ կը պահանջէ, մէջիլ տիրացու Յակոբի արձակուիլն, բանտարգելոց ազատութիւնը (անուղղակի ցոյց մը կառավարութեան դէմ). անխտնեմ ժողովականի մը պատճառաւ խնդիրն կը մեծնայ, ապալիներն կը կոտորեն, իզմիրլիան կիսամեռ կիցայ մարած, և իրիստանի միջամտութեամբ ծանր հետեւանաց առաջն կանուռ: Քաղաքական ժողովոյ պահ մը հրաժարական տալ կուզէ, բայց այդ որոշումը ետ կը թողուի: Ազգ. ընդհ. ժողովոյ գումարման օրն մերժ էր. հրաւերներն խրկուած էին. ժողովրդական ճնշման մը երկիւղն ունեցան յանկարծ, պատրաստութիւն չէր տեսնուած. ժողովոյ օրն, օգոստոսի 3, պաշտօնական յայտարարութիւն մը կը ծանուցանէ թէ քաղաքի կարգի պատճառաւ, ինչպէս ժողովոյ գումարման չարաքով մէջ կը գրուի հաս թէ Կ. Պատրիարքը, ներկայ պիտի գտնուի նստին: Երէկ խուռն բազմութիւն մը Վալաթիլոյ եկեղեցին գրաւած էր, ժողովականք ոտուար մեծամանութեամբ ներկայ էին: Ատեանը կը բացուի ընդ առնանկատութեամբ Ստեփան-բաշայի, հոն են Օտոնան, Ալբրիլէն, մէջիլ, սերաստացի և այլն, հայոց մէկ հանրագիրն ի նկատի կառնուի. այն հանրագրով կը պահանջին որ ազգին ներկայ տարւոյ միջակին վերջ մը տրուի. Պատրիարքը իւր աթոռն վերադառնայ. Պատրիարքն կը դիմադրէ առարկելով իւր տկար վիճակն և բարեկարգութեանց յապաղումը, ժողովը կը դիմադրէ իւր Պատրիարքին. երկար վիճաբանութիւնք, ուր Եօստֆեան, Օդեան, Ալբրիլէն գեղեցիկ կերպով կը խօսին: Պատրիարքը գոյնը ժողովոյ կը յանձնէ. որոշումն օրոշում ծախարկութեամբ կերթայ կը վերադառնայ Ներսէս այն աթոռն որ վեց ամիսներէ յետոյ թափուր մնացած էր. ընդհանուր դռնուհուլութիւն կը տրիւ. Մատթէոս սրբազանի չորսհաւարութեան քուէ կը տրուի, որ իւր պաշտօնավարութեան միջոցին շատ խոհեմ և լաւ կերպով ազգային ներքին գործերն մատակարարեց: Բարեկարգութեանց մնացուն յանձնաժողովն հրաժարական կուտայ և կընդունուի: Պատրիարքի կը յանձնուի իւր ուղած անձերու հետ միասին կարդալից այդ խնդիրներն. հանրագիրն ներկայ ստորագրողք պահանջած էին պ. Փափաքեանի և պ. Գրիստոսյուրի ժողովն մերժուիլը. բայց այդ արդարոց պահանջումը չընդունուեցաւ: Յետոյ ժողովն պիւնէի խնդրով զբաղեցաւ և առեանը փակուեցաւ: Շատ նշանաւոր նիստ եղաւ. անխնայութեան գահասին մերժ էինք, տեսնելով փրկուեցանք թէ ոչ. Պատրիարք արիւթեմէ կախում ունի:

Տիգրանակերտի առաջնորդ ֆիլիպպոս Էպիսկոպոս, որ Պօլիս հասաւ, ժողովոյն ներկայացրց մի բողոքագիր ընդդէմ ազգ. վարչութեան որ անյիշատի զինքն Պօլիս բերել տուած է, երբ ի Տիգրանակերտ կենտական ինդիկներն կը յուզուէին: Բողոքագիրը նախաձեռնութեան դիման խրկուեցաւ. կը ցաւիւք որ Ազգ. վարչութիւնը, հակառակ Պատրիարքի խորհրդին որ ֆիլիպպոսի Տիգրանակերտ մնալը կուզէր, ֆիլիպպոս Էպիսկոպոսը իւր պաշտօնատեղէն հեռացրց. հասարակաց կարծիքն ֆիլիպպոսի նպատակաւ կը թուի:

Հալապէս, Լիւրդայի «Daily News» ի թղթակցի տուած տեղեկութիւններն կը հաստատեն «Մշակի» մէջ տուած տեղեկութիւններն Չէյթունցոյ

նկատմամբ, թէ լեւներն քաջաւած տաճկական զօրաց վրայ յարձկելու պատրաստ են. մեր թիւրքերն «Daily News» ի այդ թղթակցութիւնը հրատարակելով կը պարտաւորեն տարակոյս յայտնել: Կասեն թէ Նուրեհան հրաժարական տուած լինի 3 օր առաջ լեղցինք թէ Պապիկ իշխանը յարձակեք է Չէյթունի մէջ գտնուող թիւրք զօրաց վրայ. սպաննելու վաներ է զանոնք. թիւրքներն ու զէնքերն առած է. բանտերն բացել և արձակել է իւր ընկերներն. սակայն զժողովարար իւր եղբայրը Չէյթունի բանտերուն մէջ չէ գտնու: Թէպէտ և հաստատում աղբիւրներէ ստացանք այս տեղեկութիւններն, բայց ստուգութեանը դեռ չենք կրնար երաշխաւորել. յուսաւք թէ Եւրոպական թերթերն աւելի լոյս տան. Սալիդ-բաշա, Չէյթունի նոր քովսէյն աճապարանք մեկնեցաւ ի Չէյթուն:

Անցեալ շաբաթ «Levant Herald» մի հեռագիր կը հրատարակէր թէ 23 քիւրդ պէյեր դարձեալ աքսորուեր են Ալալանիս: Գլխաղաղաբար Levant վեց ամսուան համար խափանուեցաւ կառավարութեան կողմէ, եթէ ոչ այս երեկոյ որ շաբաթ է, դարձեալ Տիգրանակերտէն հեռագիր մը կը հրատարակէր 23 նոր քիւրդ պէյերու աքսորանաց նկատմամբ:

Յ. Գ. Մինչ կը կարծէինք որ երկուշաբթի աւուր թղթատարով նամակ պիտի խրկեմք, իմացանք որ ֆօթիի ճանապարհը բացուեր է, ուստի շուտով այն համառօտ տեղեկութիւններն հաղորդեցինք շաբաթ մը չուշանալու համար:

Նամակ փակելու միջոցին ինձ հաղորդեն թէ իզմիրլի «Արշալոյս Արարատեանը» (որ բաժնակի ու աֆիսի դնեն գրաւաւ լեզուաւ կը ծանուցանէ) երկար ու կծու յօդուած մը հրատարակեք է «Մշակի» դէմ:

Հայկակ

ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ

Գօկտոր Գրիգոր Արծրունու դասախօսութիւնը թիւրքաց հայերի անտեսական գրութեան վրա, թարգմանվեցաւ գերմաներէն լեզուով և տպվեցաւ Ս. Պետերբուրգում առանձին բրօշուրով «Die Oekonomische Lage der Armenier in der Türkei» թարգմանողը մեր բարեկամ մի հայ բողոքական, պ. Ա. Ամիրխանեան է: Բրօշուրը տպված է գիտութիւնների կայսերական Ակադեմիայի տպարանում: Այդ բրօշուրը արդէն ուղարկվեցաւ արեւմտեան Եւրոպայի քառասուն ամենանշանաւոր լրագիրներին, նոյնպէս ռուսաց մայրաքաղաքներին և թիֆլիսի լրագիրներին ու ամառայինների խմբագրութիւններին: Մենք մեր խմբագրութեան մէջ միայն մի հատ ունենք այդ բրօշուրից: Գինը նշանակված է 25 կոպէկ:

«ՄՇԱԿ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՄԵԶԱԶԳԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹԵՆԻՑ

Ս. ՊԵՏԵՐԲՈՐԳ, 23 օգոստոսի: «Правит. Вѣстн.» լրագիրը հաղորդում է, որ Կայսրը այսօր կէտրից յետոյ ժամը 1-ին Մեծ իշխան Սեբէյ և Պալէկ Ալեքսանդրովիչներ և Գլխորդ Կոնստանտինովիչ ուղեկցութեամբ Վարչալայից հասաւ Ալեքսանդրովի խաչաւորներ. ժամը երեքին նոյնով հասաւ և Կերմանիայի Կայսրը, որին Պետերբուրգի Ֆրիդրիխ-Ալէքէյ III Թաղաւորը անուն կրող զրէնադէրեան զնդի պատուաւոր թիկնապահ զօրքի զուլ անցած, դիմաւորեց Քաղաւոր Կայսրը նոյն իսկ կայսրանում:

ՓԱՐԻՋ, 23 օգոստոսի (4 սեպտեմբերի): Մասնաւոր տեղեկութիւններին նայելով Ստոկհոլմից Նօրվէնշտեդի առաջնորդութեամբ ուղևորված շվեդական արշաւանքը, յաջողութեամբ կատարելով հիւսիսային ճանապարհորդութիւնները, հասաւ Սապոնիս:

Ս. ՊԵՏԵՐԲՈՐԳ, 23 օգոստոսի: Պետական բանկի 5% տոմսերը առաջին շքանի արժէ 94 ռ. 75 կ., երկրորդ 93 ռ. 25 կ., երրորդ 93 ռ. 75 կ., չորրորդ 93 ռ. 50 կ., ներքին 5% առաջին փոխառութեան տոմսեր արժէ 232 ռ., 5 կ., երկրորդ 233 ռ., 75 կ., աւելեան առաջին փոխառութեան տոմսեր արժէ 92 ռ., երկրորդ 911/8 ռ. երրորդ 92 ռ., ոսկի 7 ռ. 86 կ.: Ռուսաց 1 ռուբլ. Լոնդոնի վրա արժէ 2415/16 պէնա: Տրամադրութիւնը ամուր է:

Խմբագիր—հրատարակիչ ԳՐԻԳՈՐ ԱՐԴՐՈՒՆԻ

Մամուլի տակից զուրս եկան և վաճառվում են 4 եւ տր 9 ն ա կ ա ն Գր ա վ ա ճ ա
ռ ա ն ո ճ ց ու մ հետեւեալ հայերէն գրքերը:

- | | | |
|----|--|---------|
| 1. | Մայր եկեղեցու Ս. Եօթնբորդ տապարակի մասին, աշխատանքները | — 35 կ. |
| 2. | Բէկեր բնական համալսարանի ուսման մի գործողությունների, աշխ. | — 15 կ. |
| 3. | Վարչության բնական համալսարանի, հանգանակությունների մասին | — 50 կ. |
| 4. | Աշխատանքների վերջին մասին, աշխատանքների, ծախսերի մասին | — 25 կ. |

Մայրենի լեզուն գումարով գնողներին նշանաւոր գիջումն է լինում:

Նոյնտեղը վաճառվում է հանգ. Ս ա ե փ ա ն ն ո ս ն ա ղ ա ր ե ա ն ց ի վիճակի պատ-
կերել պ. Նահապետիկանի հայերեն և ռուսերեն ուղերձով իւրաքանչիւր օրինակի զինն է մէկ
րուբլի: Վաճառուից զոյացած զբաժն պիտի գործ քնուի հանգուցելու յիշատակին մէկ
կիարձան կանգնեցնելու: Յոս ունենը որ մեր Թիֆլիսաբնակ և զաւառաբնակ աղայիներ չենք
բաւականնայ լոյ և աժան ցոյցելով միայն կատարել հանգուցելու հոգեհանգիստը, այլ
և շտապեն ձեռք բերել նորա վնդանս զլրը, որով և կը նպաստեն մի համեստ յիշատակ
կանգնեցնելու մէժ հ ր ա պ ա ր ե ա ն զ ո ս ո ս ի անուանը: Այս գործի սկզբնաւորութիւնը
պատկանում է Մոսկվայի հայոց եկեղեցու երեցիփոխան պ. Մեղքն Գապարեան Փանեանցին,
որից ստացում են այդ պատկերները:

ԿԵՆՏՐՕՆԱԿԱՆ ԳՐԱՎԱՃԱՌԱՆՈՑՈՒՄ

զաճառովում են, 'ի միջի պլլոց' հետեւեալ հայերէն գրքերը.	Բ.	4.
Օր. Տէր-Մարկոսեանց՝ Թ աււամայ Մ եղու, պատկերապ.	—	40
ԲԺ. Տիգրանեան՝ Մարմնական զգումն անբարան.	1	—
ԲԺ. Բարսեան՝ Ուսումնարանն անբարան. հարցեր	1	—
Սրուանճեան՝ Թորոս Աղբարմա.	1	25
— Մանանայ.	1	75
— Շուշան Շաւարշանայ.	—	50
Խրիմեան՝ Հրաւիրակ Արարտեան.	1	25
— Սիրաքէ Սամուէլ.	1	45
— Յիսուսի վերջին շարաթը.	—	70
— Մարգարիտ Արքայութեան.	—	75
— Դրախտի ընտանիք.	1	25
— Վանգոյ.	—	20
Պէշեքթալեան՝ Մատենագրութիւնը.	2	75
Կոստանեան՝ Մէթոդին վերայ.	—	75
Դուրեան՝ Տաղքէ թատերերգութիւնը.	1	75
Ալիբուսեան՝ Տեղիկ. Հայոց զաղթականութեան.	1	20
Ծերեց՝ Թորոս Առնի.	1	—
Հալաճեան՝ Նորերգարան.	—	75
Զերազ՝ Դրական փորձեր.	1	—
— Ազգային դատարարականութիւն.	1	—
— Հայաստանի Կառավարիչի տիպ.	—	60
— Թէ ինչ շահեցանք Բերրի վեհաժ.	—	40

Ներանձան հրապարակի վրա ԹԱՄԱՄՇԵՎԻ կարավանսարայի գեմուղեմը ընդ 11. տան վերի յարկում վարձով տրվում է մեկ ԳԱՀԼԻՃ ծառայով, լաւ կարաւիքով և առաւօտուկիկի սամովարով. դահլիճը մի բալկոն ունի իր առաջ: Գինն է ամսական 40 ռուբլ: Բացի դահլիճը մի և նոյն ամսը վարձով տրվում են նոյնպէս առանձին ՍՆՆՏԱԿՆԵՐ կարաւիքով ծառայով սամովարով և լուսաւորութիւնով. այդ սենեակները ամսական արժեն 25, 20 և 15 ռուբլ: Այդ սենեակներում կարելի է նոյնպէս ընկերով բնակվել: Հարցնել մի և նոյն տան դրան առաջ միւրգ ծախող ՅԱԿՈՎԻՅԻՆ:

Յունիսի 17-ին Աբերդուռ թաղամասում ըստի-
զորական նպատակով տւած ներկայացումից գո-
յացաւ 294 ր. գումար. տոմսակներ ծախկեցաւ
226 ր. 70 Կ., իսկ ընդհանուր մուտքի մնացած
մասը, այսինքն 67 ր. 30 Կ., զանազան անձերի
գոհաբերութիւնն է կազմում: Դասերի բոլոր գու-
մարը կազմում է 139 ր. զուտ գումար մնում է
155 ր., որը յանձնակցաւ պ. Փուրլինեանցին հա-
ցնելու ըստ պատկանելոյն: Մեր սրբազան պարտա-
ւորութիւնն ենք համարում՝ մեր անկեղծ շնորհա-
կարութիւնը յայտնել այն անձանց, որոնք իրանց
ներկայութեամբ պատուեցին մեր ներկայացում մնա-

«ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԹԵՐԹ» ԱՄՍԱԳՐԻ

10 $\mathcal{F} w q p n \perp \theta \mid \perp \mathbf{h} \mid y$

«Մանկավարժական Թերթը» իւր երկրորդ տարուայ շրջանում հրատարակվելու է նոյն ուղղութեամբ և ծրագրով, ինչպէս որ առաջին շրջանում՝ հետեւեալ պայմաններով:

1. Տարեկան կը լինի 10 զբոյշիկ իւրաքանչիւրը 6 ԹԻՐԹԻԶ (96 էրես):
2. Տարեկան զինն է ամենայն տեղ 6 ու.:
3. Մինչև սեպտեմբերի 10-ն բաժանորդ դադիր վճարող բաժանորդը կը ստանայ ձրի յունիս ամսի վերջին մի էրտիր Հնդկանութեան ԹԻՐԻ Հայրենիք լեզուով լծարգմանութեամբ կամ ինքնուրոյն ընթերցանութեան Համար:
4. Եթէ բաժանորդաց Թիւր Հասնի մինչև 480-ի, այն ժամանակ խմբագրութիւն իւր բաժանորդներին ձրի տալու է երկու զիրք:
5. Ուսուցիչները կարող են բաժանորդաց զինք վճարել երկու նուագ, առաջին երեք ռուբլի յունիքի մինչև 6-ն: Վերջին նուագի բաժանորդագիրը ուշանալիս «Երբէք» չի ուղարկիլ յունիքներ զբոյշիկց սկսած մինչև դրամը ստանալը:
6. Որ և իցէ զբոյշիկ չը ստանալու մասին բողոք հարկաւոր է ուղարկել ուղղակի խմբագրութեան Հետեւեալ №-ը ստանալուն պէս:
- Բաժանորդը գրուիլ ցանկացողները կարող են գիտել խմբագրութեան գրասենեակը, որ գտնուիւմ է պ. Յ. Մարտիրոսեանի տպարանում, Օրբէյեան վոլոցի վերայ, Այլքասողեան պարտեզի մօտ:

Օտարաբարաբացիք կարող են զիմել հե-
տեւել հասցեով. В контору Редакции
Армянскаго Журнала „Педагогический
Листок“.

Խմբագիր ՅԱԿՈԲ ՏԵՐ-ՅՈՎՀԱՆՆԻՍԵԱՆ:

Յիջիլիսի արհեստադրների կուրբի զեխա-
որ անդամներ խորհուրդը նշանակել է տալ-
ման-Սուրիս այգիում մի ընտանեկան երեկոյ,
րն ժամանակ իմ լինի երաժշտութիւն և
բազում բաղի տեղական սաղանդաբար: Հիւրեր
նշարւեալ են, բայց պէտք է նրանց անդամ-
ները մէկը մոռնա: Մուտքի համար տղա-
նարկերանցից տասցելում է 1 ր. 50 կ, իսկ
անարկեր 50 կ:

1-2

ՄԱՆԿԱԿԱՆ ՊԱՐՏԷԶ

Տարրաւան Ուսուցիչաւ

Սլավոներտների և աշակերտուհիների ընդունե-
լով թիւնը և քննութիւնները կը սկսվեն օ-
գոստոսի 21-ին, իսկ ուսումը կը սկսվի սեպ-
տեմբերի 3-ին 1879 թ:

Մանկական Պարտեզում ընդունվում են եր-
ու սեռի մանուկներ 4-ից մինչև 7 տարե-
ան Հասակը, իսկ ուշուժնարանում ընդուն-
վում են 7-ից մինչև 14 տարեկան Հասակը:

Ուսման ընթացքը այնպես է յարմարեց-
ած, որ Ուսումնարանում թէ՛ աղջիկ և թէ՛
ղայ ավարտողները կարող են զինխազիանե-
ի 1 և 2-րորդ դասատուները մտնել:

Սօլլակի, Վելիամինովսկայա փողոց, Իշխ.
համտունու տուն, № 11.

Մարիամեան Յովաննան օրի-
րդաց ուսուցչին արանում ուսումը
կալում է սեպտեմբերի 3-ին. աշակերտուհի
նշումները արդեն սկսված է օգոստոսի 20-ից:
Ես տարի բացվում է երրորդ դասատուն, որով
դու ամենը կը լինես երեք դասատուն և չորս
խաորատատակն: դասատուն:

Աննա Իոզգանեան և Ստեփան Մոփ-
սէսեան Մեղիբլթները ցաւօք սրտի յայ-
տնում են առաջինն ամուսնի, երկրոր-
դի եղբոր խակական քաղաքական խոր-
հրդատու Գաիօ Մսեիէ, Մեղիբլթի
մահուան մասին խնդրում են ազգա-
կաններին և ծանօթներին ներկայ գը-
նանվել յուզարկաւորութեան հանդիսին,
շարքով օգոստոսի 25-ին, առաւօտեան
9 1/2 ժամին: Հանգուցեալն տանե-
լու են Սերգիսիակայա փողոցի վրա
գտնուած Արեւօրմշիկ տանից Մողնու-
ս. Գէորգ եկեղեցին:

ՕԳՈՍՏՈՍԻ 25

Տ Ե Ղ Ե Կ Ա Ց Ո Յ Ց

Ք Ի Ֆ Լ Ի Ս 1873

ԹԻՖԼԻՍԻ ՎԱՃԱՌԱՆՈՑ (Օգոստոսի 24-ին)	Բ.	Կ.	Հեռագրի	ԹԻՖԼԻՍԻ ՆԵՐԿԱԹՈՂԻ	Փ Օ Ս Տ	ԲԺՇԿԱՆՈՑ	«ՄՇԱԿԻ» ՊԵՏԱՍԻՍԱՆՆԵՐԻ
Ոսկին (պողպատե)	7	98		ԹԻՖԼԻՍԻ միջին ֆոն (ճառարարների գնացքը) 9 ժամին 21 րոպե առաւօտեան: Մինչև Միխայիլ օվո (խառն գնացքը) երեկոյեան 5 ժամ. 18 րոպե:	Ամեն տեսակ թէ նամակներ, թէ լրագրներ և թէ ծանոթ փոստ ամեն տեղ ուղարկելու, ընդունվում են ամեն օր, առաւօտեան 8 ժամից մինչև 1 և կէսօրից յետոյ 3 ժամից մինչև 7. Իսկ կիրակի օրերը նաւարակ նամակներ մինչև 10 ժամ առաւօտեան և 3—7 երեկոյեան:	Հիւանդանոցի ընդունելութիւնը առաւօտեան 8-րդ մինչև 10 ժամ:	—
Հին 84 պր. մ. արծ. 1000 մ.	1480	—				Երկուշաբթի. Լիւիցիլ և Գորայի վիշնի իրանդուկները:	—
Հին 20 4. 72 պր. 1000 »	1240	—				Երեկոյեան . . . 3	—
Վերջին 5% առաւօտեան տու. 100 »	238	—				Առաւօտեան . . . 3	—
Երկրորդ 5% վերջին »	237	—				Առաւօտեան . . . 4	—
Մարտի կուրսը 269 »	100	—				Առաւօտեան . . . 2	—
Լոնդոնի կուրսը Օգոստոսի վրա . . . 9	40	—				Առաւօտեան . . . 3	—
Վենայի կուրսը արծ. 121 պր. . . 100	—	—				Առաւօտեան . . . 3	—
Գաւառի բարձր . . . 4	80	—				Առաւօտեան . . . 3	—
Առաւօտեան բանկի ակցիան 200 մ. . . 310	—	—				Առաւօտեան . . . 3	—
Փոթի Թիֆլիսեան երկաթուղու ակցիան 125 մ. . . —	—	—				Առաւօտեան . . . 3	—
Շաբաթը բրոքեր . . . 7	05	—				Առաւօտեան . . . 3	—
» միւս տեսակ . . . 6	95	—				Առաւօտեան . . . 3	—
» շաբաթ առաւ . . . 5	60	—				Առաւօտեան . . . 3	—
» տրանսպորտ . . . 5	10	—				Առաւօտեան . . . 3	—
» մարք վաճառ . . . 10	—	—				Առաւօտեան . . . 3	—
Բամբակի երկաթուղու Ամերիկայի սերմի . . . 8	—	—				Առաւօտեան . . . 3	—
Միւս տեսակի հին սերմի . . . 7	40	—				Առաւօտեան . . . 3	—
Բուրգը թուշի . . . 7	50	—				Առաւօտեան . . . 3	—
» թարաքամի . . . 4	—	—				Առաւօտեան . . . 3	—
Ալիւրը Շորապալի . . . 2	20	—				Առաւօտեան . . . 3	—
» երկանի . . . —	—	—				Առաւօտեան . . . 3	—
Գարին . . . 1	40	—				Առաւօտեան . . . 3	—
Մոմը բնածաղկի (creap.) . . . 12	40	—				Առաւօտեան . . . 3	—
Մետաքսը Նուխլայ . . . 180	—	—				Առաւօտեան . . . 3	—
Կախեթ ունը . . . 100	—	—				Առաւօտեան . . . 3	—
Կոկոնը Նուխլայ (բոժ.) . . . 50	—	—				Առաւօտեան . . . 3	—
Ֆրիդոնը (լաւր) Ագուրի . . . 60	—	—				Առաւօտեան . . . 3	—
Կօֆէն մօկօի . . . 26	—	—				Առաւօտեան . . . 3	—
» լիւանի . . . 22	—	—				Առաւօտեան . . . 3	—
» Մանտիսիւն . . . 18	—	—				Առաւօտեան . . . 3	—
						Առաւօտեան . . . 3	—
						Առաւօտեան . . . 3	—
						Առաւօտեան . . . 3	—
						Առաւօտեան . . . 3	—
						Առաւօտեան . . . 3	—
						Առաւօտեան . . . 3	—
						Առաւօտեան . . . 3	—
						Առաւօտեան . . . 3	—
						Առաւօտեան . . . 3	—
						Առաւօտեան . . . 3	—
						Առաւօտեան . . . 3	—
						Առաւօտեան . . . 3	—
						Առաւօտեան . . . 3	—
						Առաւօտեան . . . 3	—
						Առաւօտեան . . . 3	—
						Առաւօտեան . . . 3	—
						Առաւօտեան . . . 3	—
						Առաւօտեան . . . 3	—
						Առաւօտեան . . . 3	—
						Առաւօտեան . . . 3	—
						Առաւօտեան . . . 3	—
						Առաւօտեան . . . 3	—
						Առաւօտեան . . . 3	—
						Առաւօտեան . . . 3	—
						Առաւօտեան . . . 3	—
						Առաւօտեան . . . 3	—
						Առաւօտեան . . . 3	—
						Առաւօտեան . . . 3	—
						Առաւօտեան . . . 3	—
						Առաւօտեան . . . 3	—
						Առաւօտեան . . . 3	—
						Առաւօտեան . . . 3	—
						Առաւօտեան . . . 3	—
						Առաւօտեան . . . 3	—
						Առաւօտեան . . . 3	—
						Առաւօտեան . . . 3	—
						Առաւօտեան . . . 3	—
						Առաւօտեան . . . 3	—
						Առաւօտեան . . . 3	—
						Առաւօտեան . . . 3	—
						Առաւօտեան . . . 3	—
						Առաւօտեան . . . 3	—
						Առաւօտեան . . . 3	—
						Առաւօտեան . . . 3	—
						Առաւօտեան . . . 3	—
						Առաւօտեան . . . 3	—
						Առաւօտեան . . . 3	—
						Առաւօտեան . . . 3	—
						Առաւօտեան . . . 3	—
						Առաւօտեան . . . 3	—
						Առաւօտեան . . . 3	—
						Առաւօտեան . . . 3	—
						Առաւօտեան . . . 3	—
						Առաւօտեան . . . 3	—
						Առաւօտեան . . . 3	—
						Առաւօտեան . . . 3	—
						Առաւօտեան . . . 3	—
						Առաւօտեան . . . 3	—
						Առաւօտեան . . . 3	—
						Առաւօտեան . . . 3	—
						Առաւօտեան . . . 3	—
						Առաւօտեան . . . 3	—
						Առաւօտեան . . . 3	—
						Առաւօտեան . . . 3	—
						Առաւօտեան . . . 3	—
						Առաւօտեան . . . 3	—
						Առաւօտեան . . . 3	—
						Առաւօտեան . . . 3	—
						Առաւօտեան . . . 3	—
						Առաւօտեան . . . 3	—
						Առաւօտեան . . . 3	—
						Առաւօտեան . . . 3	—
						Առաւօտեան . . . 3	—
						Առաւօտեան . . . 3	—
						Առաւօտեան . . . 3	—